ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԷՅՍԱՐԻԻ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Շամախու հայոց թեմի վանքային համալիրների մէջ մշակութային եւ ուսումնագիտական նշանակութեամբ առանձնայատուկ դեր է ունեցել Շամախու գաւառի Մէյսարի գիւղի հիւսիս-արեւմտեան խոր կիրճի ձորաբերանում գտնուող Մասանց կամ Մէյսարի[1] վանքը, որը յայտնի է եղել գլխաւոր եկեղեցու՝ Սբ. Աստուածածնի անունով[2]: Այն համարուել է ինչպէս միջնադարեան Հայաստանի, այնպէս էլ Շիրուանի հայութեան հոգեւոր, կրթական եւ մշակութային արգասաւոր կենտրոններից մէկը: Շամախու թեմի 1887-1895ի առաջնորդ Մեսրոպ Արք. Սմբատեանցի (Նախիջեւանցի) վկայու-թեամբ. «*Մէյսարու վանքը նախապատիւ լինելով Շամախուոյ թեմի մէջ ըստ աւանդութեան՝ Սաղիանի վանքի վանահարց ցուցակի մէջ յիշեալ եպիսկոպոսաց եւ վարդապետաց մեծ մասն համարւում են Մէյսարու վանքի վանահայր...*»[3]: Մատենագրական աղբիւրները եւ ձեռագիր յիշատակարանները վանքի վանական կառոյցներից Սբ. Աստուածածին եկեղեցու կառուցման ստոյգ թուականի վերաբերեալ տեղեկութիւններ չեն հաղորդում: Թերեւս առաջին յիշատակութիւնը կապուած է Աղուանից Սիմէոն Դ. Խոտորաշենցի կաթողիկոսի եւ Շամախու թեմի առաջնորդ Անտոն վարդապետի օրօք (1667-1681)[4] վանքի Սբ. Աստուածածին եկեղեցու 1680 թուականի նորոգման հետ: Այդ մասին եկեղեցու մուտքի վերնամասում կայ հետեւեալ արձանագրութիւնը. «*Քրիստոսի թվին ՌՈՁ* (1680): *Արդ ես Հուսկ Անտոն վարդապետս նորոգեցի զԱստուածածնի վանքս, որք հանդիպեցի սմա յաղօթս յիշեցէք, ի Տէր, ի ՌՃԻԹ* (1680) *թվին Հայոց*»[5]: Ղեւոնդ Ալիշանը Մէյսարիի վանքի վերաբերեալ գրել է. «*Կայ եւ այլ մենաստան ի Մասերի գիւղ ի հարաւոյ քաղաքին* (Շամախու - Գ.Ս.), *նորոգեալ յամին* 1680»[6]: 1680ը վանքի նորոգութեան թուական է համարել նաեւ ԺԹ. դարի վերջին Մէյսարի գիւղ այցելած հայ բազմավաստակ գրող Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեանը (Քաջբերունի), որն իր ճամփորդական նոթերում գրել է. «*Սուրբ Աստուածածնի վանքը* 1680 *փրկչական թուականին նորոգել է Անտոն վարդապետը...*»[7]: Թեմի առաջնորդ Վլաս Վրդ. Շամախեցին (1688-1701) Անտոն վարդապետի հետ միասին վանքի վանահայր Տէր Երեմիայի օրօք կառուցել է խորանը: Սբ. Աստուածածին եկեղեցու տանիքի վրայ՝ գմբէթից բացուող մուտքի ճակատին այդ մասին արձանագրուած է. «*Շնորհօքն Քրիստոսի կառուցաւ Սուրբ խորանս անուամբ հրեշտակապետացն եւ երկնային զօրացն, աղօթիւք եւ բարեխօսութեամբ սոցա ողորմեայ Տէր Աստուած Անտոն եւ Վլաս վարդապետացն, մանաւանդ Սուրբ ուխտս աշխատաւորացն, եւ նուէրք եւ ընծայ բերողացն եւ հաւատացելոցն ի Յիսուս Քրիստոս, ի հայրապետութեան Աղուանից Տեառն Սիմէօնի եւ յառաջնորդութեան Տէր Երեմիային, թվ. ՌՃԼԷ*

(1688թ.)»[8]: Սբ. Աստուածածին եկեղեցու բեմն ու դուռը պատրաստել է ջուղայեցի Խոջա Շահվէլին: Եկեղեցու ներսի բեմի արեւմտահայեաց երեսին արձանագրուած է եղել. «*Ցիշեցէք ի քրիստոս զՋուղայոց դաշտեցի Բանդուրի որդի խոջայ Շահվէլին, որ շինեաց զբեմն եւ զդուռն յիշատակ համօրէն ննջեցելոցն, Թվ. ՌՃԿԶ* (1717)»[9]:

Վանքի համակառոյցներից էր հիմնական յուշարձանախմբից հարաւարեւելք 1719ին կառուցուած Սբ. Նշան եկեղեցին, որի մուտքի վրայ փորագրուած է եղել. «*Թվին ՌՃԿԸ* (1719) *շինեցաւ սուրբ Նշան եկեղեցին յիշատակ ամենայն Քրիստոնէից ննջեցելոց՝ եկաց եւ բնակաց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց. մանաւանդ Ջուղայեցի Գէորգի որդի պարոն Պետրոսին. եւ Շամախեցի Յակոբի որդի Թամուրին եւ Օհանին եւ ծնողացն Եղիսաբեթին, եւ հանգուցեալ որդւոյն Մատթէոսին. ո՛վ ընթերցօղք յորժամ ընթեռնաք, յիշեցէք յաղօթս ձեր Անտոն անարժան քահանայն. յիշեալ լիջիք առաջի գառին Աստուծոյ, ամէն*»[10]:

Մեսրոպ Արք. Սմբատեանցը հետեւեալ նկարագիրն է տուել վանքի տեղադրութեանը. «*Մէյսարու վանքի տեղն ու դրութիւնը բարձրահայեաց եւ սրտաբաց լինելով, եւ օդն ու ջուրն աւելի առողջարար, նոյնպէս եւ տաճարի եւ սենեկաց շէնքերն սրբատաշ քարով ու կրով շինած եւ կանգուն մնացած լինելով՝ շատ գերագանց է եւ վայելուչ բնակութեան համար...տեսարանը սրտաբաց, իսկապէս բանաստեղծի բնակավայր...*»[11]: Վանքի Սբ. Աստուածածին եկեղեցին եղել է ընդարձակ կառոյց եւ ունեցել է սրածայր կաթողիկէ: Վանքը ներսից եւ դրսից կառուցուած է եղել սրբատաշ քարերով եւ կրաշաղախով: «*Տաճարը, անուն սուրբ Աստուածածնի ընդարձակ եւ հոյակապ է առանց սեան, որին կից է եւ միւս տաճարն իբրեւ գաւիթ նորա վեց սեանց վրայ, իսկ տաճարի տանեաց վրայ շինուած է կաթուղիկէն քարայ, որոյ մէջը սեղան յարմարացրած, անուն Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի*»[12],- գրում է Մեսրոպ Արք. Սմբատեանցը:

Վանքը հռչակաւոր էր իր միաբաններով: Վանքի հիւսիսային եւ արեւմտեան կողմում միաբանների համար կառուցուած է եղել երկյարկ շինութիւն՝ մի շարք սենեակներով, ուր բնակուել է նաեւ վանահայրը[13]: Վանքը եղել է նաեւ գրչութեան արդիւնաւէտ կենտրոն[14]: «*Այս վանքն յառաջ ժամանակաւ ունեցած է բաւական վարդապետ միաբան ինչպէս երեւում է խցերի աւերակներից եւ գերեզմանատնից...Այս վանքն նոյնպէս եւ սուրբ Ստեփաննոսի Սաղիանու վանքն մինչ ի հաստատութիւնն հոգեւոր Ատենին ի Շամախի՝ շէն են եղած եւ լի բաւական միաբանութիւնով*»[15],- գրել է 1865 Սեպտեմբերին գիւղ այցելած բեմի 1863-1868ի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցը (Տարօնեցի): Վանքին կից սրբատաշ քարերով կառուցուած են եղել միաբանների ուր սենեակները[16]: Վանքի նշանաւոր միաբաններից է եղել Գրիգոր վարդապետը, որի մասին միաբանութեան սենեակի որմին արձանագրուած է եղել. «*Ես Գրիգոր վարդապետս գրեցի ի ՌՃԿ. Թվ.* (1711)»[17]:

Մէյսարիի վանքն իր վանական դպրոցով նախապատիւ է եղել Շամախու բեմում[18]: Դատելով վանքի ունեցած կրօնա-մշակութային մեծ դերից՝ կարելի է ենթադրել, որ այն գործել է վաղ միջնադարից: Դպրոցը պատրաստել է ոչ միայն եկեղեցականներ, այլեւ մատենագիրներ, գրիչներ ու ծաղկողներ: Այդտեղ ուսում առած մարդիկ իրենց արժանի նպաստն էին բերում Շիրվանի եւ

հայաբնակ այլ վայրերի մշակութային կեանքի առաջընթացին: Թէեւ աղբիւրները մանրամասն տեղեկութիւններ չեն հաղորդում դպրոցի գործունէութեան մասին, սակայն դատելով նրա մեծ հռչակից, ենթադրում ենք, որ այնտեղ դասաւանդել են ժամանակի նշանաւոր գիտնականները: Թերեւս կարելի է եզրակացնել, որ վանական դպրոցում դասաւանդուել են միջնադարին բնորոշ գիտութեան շատ ճիւղեր: Դրանց մէջ աստուածաբանութեան եւ կրօնագիտութեան կողքին պիտի յիշատակել փիլիսոփայութիւնը, տոմարագիտութիւնը, երաժշտութիւնը, քերականութիւնը, ճարտասանութիւնը, գրչութեան արուեստը եւ տրամաբանութիւնը: «*Նորհաստատ կամ նորոգած վանքերն*,- գրել է Կարապետ Կոստանեանը,- *եղան պատսպարան Ս. Գրքի ուսումնասիրութեամբ եւ մանուկների դաստիարակութեամբ պարապող կրօնաւորների*»[19]: Ըստ Մեսրոպ Արք. Սմբատեանցի՝ հայոց կաթողիկոս Յակոբ Շամախեցին (1759-1763) սկզբնական կրթութիւնը ստացել է Մէյսարիի վանքի վանական դպրոցում, այնուհետեւ եղել է վանքի միաբաններից, իսկ դպրոցի արգասաւոր գործունէութեան ժամանակաշրջանը հիմնականում կապւում է նրա անուան հետ[20]. «*...մի ձեռագիր Աւետարանի յիշատակարան ասում է. «ունէր* (Յակոբ Շամախեցին - Գ.Ս.) *բազում աշակերտս ուսման», որոյ դրպ-բոցն երեւի լինել ի Մէյսարու վանս եւ շատ յարմար է*»[21]: Արդիւնաւէտ գործունէութեան շնորհիւ, վանքը Աբրահամ Եպս. Շաքեցու եւ Յարութիւն Վրդ. Շաքեցու կողմից 1791ին կազմուած պաշտօնական գրագրութիւնների «*Ձեւք Նամակաց եւ Գրութեանց*» *ժողովածուի անթուակիր նամակներից մէկում յիշատակւում-մեծարւում է «Մէհիսարու գերահռչակ Սուրբ Աստուածածնի...*»[22] պատուանունով: Հարկ է նշել, որ երկրամասի քաղաքական անկայուն դրութիւնը, պարբերաբար կրկնուող ասպատակութիւնները, մասնաւորապէս հայ բնակչութեան նկատմամբ թուրք-պարսկական բռնապետերի վարած հալածանքի քաղաքականութիւնը յետագայ ժամանակներում անելանելի վիճակ էին ստեղծել վանական դպրոցի համար, որի պատճառով էլ նրա գործունէութիւնը յաճախ ընդհատուել եւ կասեցուել է: Ի դէպ, նշուած ժողովածուի անթուակիր գրութիւնից յայտնի է դառնում նաեւ ուշագրաւ այն տեղեկութիւնը, որ երկրամասում Շաքիի եւ Շամախու հայոց թեմերից զատ, Դերբենդ, Մուսկուր, Ղուբա եւ Ոստանի կամ Ղոշուն գաւառների շրջատարածքներում գործել է նաեւ մէկ այլ թեմ, որը պատկանել է Մէյսարիի Սբ. Աստուածածին վանքին: Ինչպէս ասուած է ձեռագրում. «*Մէհիսարու գերահռչակ Սուրբ Աստուածածնի վանից բոլոր թեմի եւ վիճակին, այսինքն Ղօշունու օրհնեալ երկրին եւ Մուսկուրու եւ այլ շրջակայ գաւառաց եւ գիւղօրէից դոցին...զսիրելի որդեակն իմ, զԴաւիթ հանճարաշատ վարդապետն ձերումդ սրբոյ վանից վերատեսուչ եւ կառավար, եւ ձեր իսկ հովիւ եւ առաջնորդ կարգեցաք*»[23]: Դատելով մատենագրական աղբիւրի հաղորդած տեղեկութիւնից, Դաւիթ վարդապետը կարգուել էր եւ՛ վանքի վանահայր, եւ՛ միաժամանակ թեմի առաջնորդ, իսկ թեմը հաւանաբար կոչուել է առաջնորդանիստ վանքի՝ Մէյսարիի անուամբ: Մէյսարիի վանքի՝ վերոնշեալ շրջատարածքների համար եպիսկոպոսական թեմի առաջնորդանիստ կենտրոն լինելու փաստի վերաբերեալ տեղեկութիւն է թողել նաեւ Մեսրոպ Արք. Սմբատեանցը, որը, խօսելով Դերբենդ, Մոլլա-Խալիլ, Պօղոս Քեանդ գիւղերի հայ բնակչութեան՝ Ղզլար, Պետրովսկ եւ Սուրբ Խաչ գաղթելու մասին, գրում է. «*...եւ այդ բոլոր գաղթած ժողովուրդը թեմ ու վիճակ կազմելով Աղուանից աշ-*

խարհքումն՝ պատկանում էին Մէյսարի սուրբ Աստուածածնի վանքին...»[24]: Մատենագրական աղբիւրները այլ տեղեկութիւններ չեն հաղորդում այդ թեմի ինչպէս սկզբնաւորման, այնպէս էլ թեմակալ առաջնորդների ու թեմական կեանքի մասին ընդհանրապէս:

Մէյսարիի վանքն ունեցել է վանական հարուստ տնտեսութիւն, վարելահողեր, այգիներ ու ջրաղաց: Ըստ Մեսրոպ Արք. Սմբատեանցի՝ վանքի վանքապատկան հարուստ կալուածքներից 1890ին մնացել էին ընդամէնը 19 անուն վարելահող ու մի այգետեղ, որոնք վանքի չգործելու պատճառով տրուած են եղել կապալով[25]:



Մէյսարի Ս. Աստուածածին վանքի տեսքը ԺԹ. դարավերջին

Մէյսարիի վանքը եղել է նաեւ երկրամասի ձեռագրային մշակոյթի կենտրոններից եւ ունեցել է գրչանոց ու գրատուն: Այդտեղ արտագրում, թարգմանում եւ կազմում էին ձեռագիր գրքեր: Դրա խօսուն վկաներն են վանքում 1671ին Վկաս վարդապետ Շամախեցու արտագրած *Հոգեաց Գիրքը*[26], գրիչ Կիրակոս Երէցի 1695ին ընդօրինակած *Աւետարանը*[27] (ստացող՝ Սալվար), եւ Վկաս գրչի ընդօրինակած *Ժողովածուն* (ԺԷ. դ.)[28]: Ըստ Մեսրոպ Արք. Սմբատեանցի՝ Մէյսարիի վանքում է գործել Յակոբ վարդապետ Շամախեցի անունով մէկ այլ գիտնական-վարժապետ, որը 1728ին վանքում արտագրել է *Մեկնութիւն Ժամագրքի* ձեռագիրը եւ գրել *Պատմութիւն Ժամանակագրական* աշխատութիւնը[29]: Վանքի գրչատան հարուստ ձեռագրերի մասին, ցաւօք, մատենագրական աղբիւրները սակաւ տեղեկութիւններ են հաղորդում եւ մեզ դրանց չնչին մասն է հասել միայն: Այդ փրկուած մասունքներն էլ, ինչպես տեսնում ենք, հիմնականում վերաբերում են ԺԷ. դարին: Ենթադրում ենք, որ վանքում ստեղծուած կամ ի պահ դրուած ձեռագրերը յաճախակի ոչնչացուել եւ թալանուել են զաթիչների ասպատակութիւնների հետեւանքով: Այս առու-

մով Մակար Վրդ. Բարխուտարեանցը գրում է. «*Որքան փառաւոր եղած է վանուցս անցեալն, այնքան տխուր եւ սրտաճմլիկ է այժմեան երեւոյթն: Որքան կենդանի եղած է Աղուանից կաթողիկոսութիւնն, նոյնքան պայծառ եղած են եւ Աղուանից վանքերն: Բայց այս կաթուղիկոսութեան մահից յետոյ՝ օրէցօր յափշտակուած են վանօրէից կալուածներն, ցրուած են միաբանութիւններն եւ քայքայուած վանքերն*»[30]: Մէյսարիի վանքի միաբանութիւնը գործել է մինչեւ 1851[31]:

Վանքը մեծապէս տուժել է 1869ի երկրաշարժից[32]: Հին եկեղեցու տեղում վերստին նոր եկեղեցի կառուցելու խնդրով մէյսարցիք 1874ին դիմում են Շամախու թեմի խորհուրդին, որը եւ նոյն թուականին տալիս է թոյլտուութիւնը[33]: Մակար Եպս. Բարխուտարեանցը 1890ին Մէյսարիում եղած ժամանակ վանքը տեսել է քայքայուած վիճակում. «*Այժմ բոլորովին քայքայման վիճակի մէջ է եւ վանքս եւ սենեակներն եւ պարիսպն*»[34]: Սաղիանի վանքի վերաշինումից յետոյ Մեսրոպ Արք. Սմբատեանցի մտահոգութիւնն էր վերանորոգել նաեւ ամայի վիճակում գտնուող Մէյսարիի վանքը եւ այնտեղ նոյնպէս բացել վանական դպրոց: Վանքի շինարարական աշխատանքները ձեռնարկելու համար Մեսրոպ Արք. Սմբատեանցը ակնկալում էր Բաքուի հայ բարերարների աջակցութիւնը: Թեմական անգամ այդ առիթով իր բողոքն է յայտնել թեմի հայութեան դէմ՝ մեղադրելով նրանց եկեղեցին նման վիճակի մէջ թողնելու եւ անտարբերութեան համար. «*...խեղճ շամախեցիք, ու՞ր էք մոլորուում,*- գայրոյթով գրում է թեմականը,- *է՞ր էք թողնում ձեր բարեպաշտ եւ քաջ պապերի քաղցր յիշատակը եւ 1900 տարուայ բարի ճանապարհը, եւ մուրացկանի նման ուրիշ ազգերից հոգւոյ ողորմութիւն էք խնդրում, ամօթ ձեզ, ձեր պապերը այնքան դառն ու դժուար միջոցներում, հեթանոս, բարբարոս ազգերի մէջ ապրելով՝ երբեք չմտածեցին անգամ եկեղեցին ուրանալ, այլ իրենց կարմիր արիւնով, նահատակութեամբ պահեցին եկեղեցին եւ հասցրին իրրեւ սուրբ աւանդ մեզ, իսկ դուք ապերախտ որդիք, այս ազատ միջոցում, քրիստոնէութեան ամենափառաւոր ժամանակամիջոցում, քրիստոնեայ տէրութեան ձեռքի տակ, ուրացաք ու մոռացաք եկեղեցին... ինչպէս Մէյսարու սուրբ Աստուածածնի վանքը ահա բողոքում է ձեզանից...*»[35]: Սակայն, վանքի վերաշինման աշխատանքները ձգձգւում են: Այդ է վկայում այն փաստը, որ 1895ին այն դեռեւս գտնւում էր քայքայուած վիճակում. «*...խարխուլ, հողէ կտուրով, ցած պատուհաններով եւ դռներով մի խոնաւ եկեղեցի...*»[36]. սակայն ըստ երեւոյթին յաջորդող տարիներին վանքը վերանորոգուել է. այդ է վկայում *Մշակում* լոյս տեսած մի թղթակցութիւն, որի հեղինակը գրելով 1902 Յունուարի 12ի երկրաշարժի աւերների մասին գրում է, թէ «*...նորաշէն եկեղեցին ստացել էր մեծ ճեղքուածքներ...*»[37]: Մէյսարիի վանքը մեծ վնասներ կրեց նաեւ 1918ին Բաքուի դէմ թուրքական արշաւանքի ժամանակ: Թուրք զինուորներն ու բաքար (աղրբեջանցի) հրոսակախմբերը ամբողջովին կողոպտեցին վանքը: Վանքը ընդհուպ մինչեւ Ի. դարի 70ականները գտնուել է կանգուն վիճակում, սակայն 1970ականների սկզբներին աղրբեջանցիները վայրենաբար պայթեցրել են վանքի Սբ. Աստուա-ծածին եկեղեցին եւ վանական կառոյցները: Այդ բարբարոսութեան հետեւանքով ոչնչացել են նաեւ եկեղեցիների որմերին փորագրուած՝ ԺԷ.-ԺԹ. դդ. վերաբերող բազմաթիւ արձանագրութիւններ: Եկեղեցու սրբատաշ քարերը

այլ շինութիւններ կառուցելու նպատակով տեղափոխել են աղրբեջանցիները[38]:

Ինչպէս երեւաց շարադրանքից, Մէյսարիի վանքը, որպէս առաջնորդանիստ եւ մշակութային օջախ, յիրաւի նշանակալից դեր է ունեցել Շամախու հայոց թեմում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սարգիս Արք. Ջալալեանցը Մէյսարի անուան ստուգաբանութեան վերաբերեալ գրել է. «...*գիւղն Մէյսարի, որ առեալ է զանուն իւր ի հեղիկ հողմոց հանապազ հնչելոց...*» (Սարգիս Արք. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան*, Բ. մաս, Տփխիս, 1858, էջ 397): Մեսրոպ Արք. Սմբատեանցը Մասերի կամ Մէյսարի անուններին տուել է հետեւեալ բացատրութիւնը. «...*ես կարծում եմ թէ ի պատիւ Մասանց սրբոյ որ այն վանքումն են եղել, անուանել են Մասերի վանք, կամ Մեսրավանք այն է Մեսրովբայ վանք, ինչպէս Գողթանեանց գաւառի Մսրվան գիւղը, որ իսկապէս Մեսրովրավանէ. Մեսրովբ թարգմանչի այն տեղ մնալու եւ աշակերտներ պատրաստելու - համար՝ որով եւ գիւղը, իսկ թէ այլագգական բառ համարելով Մէյսարին այնպէս բացատրենք. հետեւեալը դուրս կը գայ: Մահսերի՝ նշանակէ հանրախօսական ստորագրութեան թուղթ, բազմակնիք, զամէն մահսերագրութիւն, որ-պէս երեւի վանքի մօտի ժողովուրդ լինելով Մէյսարեցիք՝ սովրած են եղել միշտ մահսերագրութեամբ բողոքել վանահօրից, որպէս եւ Սաղիանցիք եւ այլք*» (Մեսրովբ Արք. Սմբատեանց, *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի Վանաց Սաղիանի եւ Միւս Վանօրէից եւ Ուխտատեղեաց Եւս եւ Քաղաքացն եւ Գիւղօրէից Որք ի Շամախւոյ Թեմի*, Տփխիս, 1896, էջ 143): Ըստ Մակար Եպս. Բարխուտարեանցի՝ «*Պարսկերէն մէյ նշանակում է գինի եւ սէար՝ գլուխ, իսկ Մէյսարի՝ գլխաւոր գինի*» (Մակար Բարխուտարեանց, *Աղուանից Երկիր եւ Դրացիք (Միջին Դաղստան)*, Թիֆլիս, 1893, էջ 169): Մէկ այլ - մեկնաբանութեամբ Մէյսարին բաղկացած է «Մէյ», որ նշանակել է գեփիւռ, եւ «սար» բառերից (*Մշակ*, 21.03.1902, թիւ 62):

[2] *Տոմար Ընտանեկան* օրացոյցում պահպանուած մի տեղեկութեան համաձայն՝ Մէյսարիի վանքը կոչւում է նաեւ Սբ. Գաբրիէլի եւ Սբ. Միքայէլի անուամբ (*Տոմար Ընտանեկան 1874-1875 թթ.*, Հտր. Ա., աշխատասիրեց Տ. Սրբուհի Ա. Երիցեանց, Թիֆլիս, 1874, էջ 144): Անտարակուսելի է, որ վանքը կոչուել է գլխաւոր եկեղեցու՝ Սբ. Աստուածածնի անունով:

[3] Սմբատեանց, էջ 156:

[4] Նոյն, էջ 33:

[5] Յովհաննէս Շահխաթունեանց, *Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ Հինգ Գաւառացն Արարատայ*, Հտր. Բ., Էջմիածին, 1842, էջ 381. նաեւ՝ Սամուէլ Կարապետեան, *Բուն Աղուանքի Հայերէն Վիմագրերը*, Երեւան, «Գիտութիւն», 1997, էջ 49:

[6] Ղեւոնդ Ալիշան, *Տեղագիր Հայոց Մեծաց*, Վենետիկ, 1855, էջ 92:

[7] Գ. Քաջբերունի, *Բազմամիլիոն Ժառանգութիւն*, Հայաստանի Ազգային Արխիւ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 56, ց. 1, գ. 439, թ. 37:

[8] Ջալալեանց, էջ 399-400:

[9] Նոյն, էջ 399: Հմմտ.՝ Սմբատեանց, էջ 148:

[10] Շահխաթունեանց, էջ 381: Հմմտ.՝ Սմբատեան, էջ 158-159, 161: Ջալալեանց, մասն Բ., էջ 399, նաեւ՝ Կարապետեան, էջ 50:

[11] Սմբատեանց, էջ 27, 146:

[12] Նոյն, էջ 146:

[13] Բարխուտարեանց, էջ 172:

[14] Սմբատեանց, էջ 145:

[15] Դանիէլ Արք., «Այցելութիւն Եկեղեցեաց Գիւղօրէից Վիճակին Հայոց Շամախւոյ», *Արարատ*, 1871, Մարտ, էջ 352:
[16] Նոյն, էջ 71, 144, 149. նաեւ՝ Ջալալեանց, մասն Բ., էջ 398:
[17] Սմբատեանց, էջ 149:
[18] Նոյն, էջ 145:
[19] Կարապետ Կոստանեան, *Հայոց Վանքերը (Համառօտ Տեսութիւն)*, Մոսկով, 1886, էջ 43:
[20] Սմբատեանց, էջ 150, 156-157:
[21] Նոյն, էջ 268:
[22] Մատենադարան, ձեռագիր թիւ 3452, էջ 15ա-16բ:
[23] Նոյն:
[24] Սմբատեանց, էջ 513-514:
[25] Նոյն, էջ 71, 150-151:
[26] Նոյն, էջ 157:
[27] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, կազմեցին՝ Օնիկ Եղանեան, Ա. Ջէյթունեան, Փայլակ Անթարեան, Հտր. Ա., Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1965, էջ 958:
[28] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, կազմեցին՝ Օնիկ Եղանեան, Ա. Ջէյթունեան, Փայլակ Անթարեան, Հտր. Բ., Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1970, էջ 230:
[29] Սմբատեանց, էջ 32, 157:
[30] Բարխուտարեանց, էջ 172:
[31] Կովկասեան Օրացոյց (ռուս.), Թիֆլիս, 1851, էջ 271:
[32] ՀԱԱ Ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 1:
[33] ՀԱԱ Ֆ. 56, ց. 1, գ. 6442, թ. 1:
[34] Բարխուտարեանց, էջ 172:
[35] Սմբատեանց, էջ 154-155:
[36] «Նամակ Բագուից», *Նոր-դար*, 1895, թիւ 160:
[37] Ս. Սարգիսբէկեան, «Աղէտի Շրջանից (Նամակ Շամախուց)», *Մշակ*, 12.02.1902, թիւ 32:
[38] «Հայկական Պատմական Յուշարձանների Վիճակը Հայաստանի Հարեւան Երկրներում», *Նոր-Դար*, 2003, թիւ 4, էջ 376:

FROM THE HISTORY OF MEISARY'S ST. ASTVATSATSIN MONASTERY OF THE ARMENIAN DIOCESE IN SHAMAKHI

(Summary)

GEVORG STEPANYAN

Among the churches in the Armenian Prelacy of Shamakhi, the monastery of Masantz or Meisary had both architectural, cultural and educational importance. The monastery is situated near the North-Western deep canyon of the village of Meisary, known also by the name of its main church, Surp Astvatsatsin (Holy Madonna). The monastery was a religious, educational and cultural center in medieval Armenia and for Armenians in the Shirvan region. The monastery and its school were the primary educational center in the Prelacy of Shamakhi. The school graduated both renowned clerics and chroniclers.

The monastery structure was standing until the early-1970s. However, as of the 1970s the Azeris brutally demolished the construct of St. Astvatsatsin. As a result many inscriptions on the walls of the monastery dated 17-19th centuries disappeared. As for the stones, the Azeris moved them to build other constructions.